ՕՐԱԿԱՐԳ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի
2024 **թվականի նոյեմբերի** 13-**ի՝ հարցման կարգով նիստի**

1. **Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկանի հաշվետվության մասին որոշումը հաստատելու մասին**:

2. **Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի** N 9-1/9.2.3/31388-2024 **գրության համաձայն՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի ավագ դասախոս**, **մանկավարժական գիտությունների թեկնածու Քրիստինա Մելսի Թորգոմյանի դոցենտի գիտական կոչում շնորհելու որակավորման գործը վերանայելու մասին**:

   Առաջարկվում է Քրիստինա Մելսի Թորգոմյանին շնորհել դոցենտի գիտական կոչում Ժ.02.00՝ «**Լեզվաբանություն**» **մասնագիտությամբ**:

   Ք.Մ.Թորգոմյանի գիտական կոչում շնորհելու գործը վերանայվել է լեզուների ամբիոնի 2024 թվականի հոկտեմբերի 24-ի նիստում (արձանագրություն N 3) և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 12-ի, ժամը 12:00-ի նիստում (արձանագրություն N 2):

3. **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի** 2023 **թվականի հոկտեմբերի** 31-**ի** N 3 - 7 **որոշմամբ հաստատված** «**Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրերում ուսումնառության**, **գիտելիքի գնահատման և վարչարարության կազմակերպման կարգում**» **փոփոխություններ կատարելու մասին**:

4. **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի** 2023 **թվականի հոկտեմբերի** 31-**ի** N 3 - 8 **որոշմամբ հաստատված** «**Առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրերում ուսումնառության**, **գիտելիքի գնահատման և վարչարարության կազմակերպման կարգում**» **փոփոխություններ կատարելու մասին**:

5. Լեզուների ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու **Ռուզաննա Ռուբենի Սարգսյանի** և նույն ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու **Արևիկ Շմավոնի Հայրապետյանի «Русский язык для**

студентов факультета информатики и статистики АГЭУ» ուսումնական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին:

Ուսումնական ձեռնարկը, 150 օրինակ տպաքանակով, հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 28-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 1): Այն նախատեսվում է հրատարակել հրատարակչության տարեկան թեմատիկ պլանով՝ «Տնտեսագետ» հրատարակչությունում:

6. Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր **Արմեն Գևորգի Ճուղուրյանի**, նույն ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Լիանա Հայկազի Գրիգորյանի** և ֆինանսական հաշվառման ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Հայկ Գերասիմի Մնացականյանի** «**Կանաչ ձեռնարկատիրության աուդիտ**» **դասախոսությունների նյութերը հրատարակության երաշխավորելու մասին**:

Դասախոսությունների նյութերը հրատարակության են երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 28-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 1):

Գիտական քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2024 թ. նոյեմբերի 13
Երևան